ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Հայաստանյան քաղաքացիական հասարակության կառույցների (ՔՀԿ) համար

Արագածոտն, Արմավիր, Արարատ, Կոտայք, Լոռի, Վայոց Ձոր մարզերից և Երևանից

Նոյեմբերի 21, 2022թ.

«ՁԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» (STRIVE) ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, այն իրականացնում է ՆԵՖ Բելգիան (NEF)՝ համագործակցությամբ չորս գործընկեր կազմակերպությունների.

• «ԱԳԱԹ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ,
• «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ,
• Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ,
• «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ

STRIVE ծրագիրը նպատակ ունի բարելավել Հայաստանի ՔՀԿ-ների կայունությունը, հաշվետվողականությունը և նորարարության կարողությունները՝ հնարավորություն տալով նրանց առանցքային դեր ունենալ իրազեկության բարձրացման, ժողովրդավարության ամրապնդման գործում:

STRIVE-ի շրջանակներում հայտարարվում է հայտերի ընդունում՝ ընտրելու յոթ (7) հայաստանյան ՔՀԿ-ների, որոնք կօգտվեն **կազմակերպական մոդելների ինովացիա** (ԿՄԻ) ծրագրից:
Վերջինս իրենից ներկայացնում է կազմակերպական կարողությունների կառուցման ինտենսիվ գործընթաց, որը սկսվում է մասնակցային գնահատումից և դասընթացներից (շուրջ երեքշաբաթյա)՝ ըստ ՔՀԿ-ի կարիքների: Դասընթացային փուլի ավարտից հետո ծրագրի թիմը կաջակցի ընտրված յուրաքանչյուր ՔՀԿ-ի մշակելու անհատական ռազմավարություն:
Ընտրված ՔՀԿ-ները կանցնեն կարողությունների զարգացման գործընթաց և անհատական քոուչինգ (շուրջ 12 ամիս)՝ ուղղված կազմակերպական նորարար ռազմավարության իրականացմանը:
Նշված ռազմավարությունն իրականացնելու նպատակով յոթ ՔՀԿ-ներին որպես ֆինանսական աջակցություն կտրամադրվի դրամաշնորհ՝ **8,500 եվրոյին համարժեք դրամի չափով:** Ֆինանսավորումը ստանալուց հետո ՔՀԿ-ները կստանան անհատական քոուչինգ (շուրջ 12 ամիս)՝ ռազմավարությունը հաջող իրականացնելու համար:

Նշված ԿՄԻ ռազմավարությունը ՔՀԿ-ներին կօգնի՝

(1) Բարելավել սեփական կազմակերպական կարողությունները,
(2) աջակցել կարողությունների զարգացման գործընթացների տարածմանը նույն մարզի այլ ՔՀԿ-ների շրջանում և
(3) զարգացնել կամ հիմնել.
(ա) կազմակերպական և գործառնական մոդելներ, ինչպիսիք են՝ օրինակ քրաուդֆանդինգը, ֆոնդահայթայթման նպատակով մասնավոր ոլորտի հետ համագործակցությունը, սոցիալական ձեռնարկությունը,

(բ) միջոլորտային հարաբերությունների զարգացում մասնավոր և հանրային ոլորտների և աջակից դերակատարների միջև:

Ծրագրին մասնակցելու համար ՔՀԿ-ները կընտրվեն հետևյալ չափանիշների հիման վրա.

- Պատրաստակամություն՝ անցնելու ինստիտուցիոնալ կարիքների գնահատման և կազմակերպության ընթացակարգերի ու քաղաքականության բարելավման գործընթաց,
- Արժեք ավելացնելու ներուժ (օրինակ՝ դժվար հասանելի խմբերի հետ աշխատանք, թեմատիկ առաջնորդություն),
- Ծրագրի արդյունքների կայունության պահպանման ներուժ (օրինակ՝ ծախսերի գծով համաներդրում, աշխատուժի և կամավորների ներգրավում և այլն),
- Քաղհասարակության դերակատարների և կազմակերպությունների ուժեղացման ապացուցված փորձառություն,
- Ուժեղ կապեր հանրության, շահառուների և մասնավոր ոլորտի հետ,
- Ցանկություն և կարողություն՝ հյուրընկալելու մենթորային հանդիպումները[1] իրենց համապատասխան մարզերում,
- Անհրաժեշտ տարածքի և անձնակազմի/կամավորների առկայություն, ովքեր կմասնակցեն ծրագրի տարբեր գործողություններին մինչև 2025թ. հունիս ամիսը,
- Այլ ՔՀԿ-ների հետ փորձը կիսելու պատրաստակամություն,
- Հիմնվել են նշված մարզերում, անկախ են, իրավաբանորեն գրանցված են ու հանդիսանում են հայաստանյան ոչ-առևտրային կազմակերպություն, գործում են ավելի քան 2 տարի, զերծ են կեղծիքից, կոռուպցիայից և այլ ոչ իրավական կամ հանցավոր գործունեությունից:

Դիմելու համար խնդրում ենք անցնել հայտարարության ներքևի հղումով.

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2022 թ. դեկտեմբերի 13-ը, ժամը՝ 17.00 (Երևանի ժամանակով):

Նշված ժամկետից հետո ստացված դիմումները չեն ընդունվի:

Տեխնիկական հարցերը կարող են ուղղվել grants.armenia@neareast.org
էլ. հասցեով՝ մինչև 2022թ. նոյեմբերի 30-ը, ժամը 17.00 (Երևանի ժամանակով)

Նշումներ.

[1] Մենթորայինցիկլերը հնարավորություն են տալիս մեծաթիվ ՔՀԿ-ների ուժեղացնելու կազմակերպական կարողությունները: Դրանք ծառայելու են որպես ոչ ֆորմալ ցանցերյուրաքանչյուր մարզում և Երևանում՝ կիսելով նույն նպատակները և գործիքները՝ STRIVE ծրագրի և վերջինիս թիմի աջակցությամբ: Յուրաքանչյուր ընտրված հյուրընկալ ՔՀԿ (մեկական՝ Արագածոտն, Արմավիր, Արարատ, Կոտայք, Լոռի, Վայոց Ձոր մարզերում, Երևանում) կառաջնորդի, կուղեկցի և կաջակցի մենթորայինցիկլերի գործունեությունը և կայունությունը:

- Ծրագրի մեկնարկի ակնկալվող ժամկետ՝ 2022թ. դեկտեմբերի 15
- Ընտրվող ՔՀԿ-ների թիվը՝ յոթ (7)
- Կապ կհաստատվի միայն ընտրված ՔՀԿ-ների հետ
- Նախքան վերջնական ընտրությունը՝ կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն

Գնահատման սանդղակ

Բաժին	**Առավելագույն միավոր**
1. Դիմորդ ՔՀԿ-ն համապատասխանու՞մ է արդյոք նվազագույն չափանիշներին *(հայաստանյան գրանցված ոչ-առևտրային կազմակերպություն, գործում է 2-ից ավել տարի, ներգրավված չի եղել կեղծիքի և կոռուպցիայի և ոչ իրավական գործունեության մեջ, պատրաստակամություն և կարողություն՝ մասնակցելու ծրագրին)*	4
2. Դիմորդ ՔՀԿ-ն ունի՞ արդյոք անհրաժեշտ անձնակազմ/կամավորներ և տարածք՝ հյուրընկալելու մենթորային հանդիպումներ	3
3. Դիմորդ ՔՀԿ-ն ցուցաբերու՞մ է արդյոք հավելյալ արժեք ներդնելու տարրեր (օրինակ՝ դժվար հասանելի խմբերի հետ կապը, թեմատիկ առաջնորդություն)	3
4. Դիմորդ ՔՀԿ-ն ունի՞ արդյոք ուժեղ կապեր շահառուների և հանրային/մասնավոր ոլորտների հետ	2
5. Դիմորդ ՔՀԿ-ն ունի՞ արդյոք փորձ՝ աջակցելու այլ ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը	4
6. Դիմորդը ցուցաբերու՞մ է շոշափելի պլաններ՝ ուղղված արդյունքների կայունությանը	4
Ընդհանուր առավելագույն միավոր	**20**